ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

09.09.2015թ.
260-ի 6

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Ռաֆայել Գասպարյանը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկատվություն ստանալու հարցում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ու՞մ սեփականությունն են հանդիսանում Երեւան քաղաքի տրոլեյբուսների էլեկտրական գծերը,
2. Այդ գծերը ո՞ր կազմակերպության կողմից են շահագործվում կամ օգտագործվում եւ ի՞նչ հիմունքներով,
3. Ո՞ր կազմակերպությունն է իրականացնում այդ գծերի տեխնիկական անվտանգության ապահովումը,
4. Ո՞ր կազմակերպությունն է իրականացնում այդ գծերի անվտանգության հսկողությունը,
5. Ո՞ր կազմակերպությունն է կրում Երեւան քաղաքի տրոլեյբուսների էլեկտրական գծերի խափանման հետեւանքով պատճառված վնասի համար պատասխանատվությունը (վնասը հատուցելու պարտականությունը):

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան